

Am 216

# ՀԱՆՂԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԺԸ. ՏԱՐԻ 1944

### ՀԻՆ ՀՇՇՇՍՏԸՆԻ ԱՐԵՒՄՏԵԸՆ ՍՇՀՄՇՆԸ ՓՈՔՐ-ՀՇՇՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐՇՍԻՇ)

ԳՐԵՑ Է. Յ. ՏԱՇԵԱՆ

(Շարունակություն):

Գ. դարուն վերջերը բուն Հռոմէասայաստանի համար կարեւոր փոփոխութիւն մ'եղաւ՝ ներքին վարչութեան կողմանէ: Չենոն կայսեր դէմ (470—491) դահակալական կրկին ապստամբութիւնը ծագեցան, նոյն իսկ Վերին կայսերամօր սաղրելով եւ դաւակցութեամբ, Իղղոս Իսաւրացի զօրավարը, նախ դահ հանելով զԲասիլիոս, այնպէս որ Չենոն ստիպուած էր Իսաւրա փախչիլ (475ին): Թէեւ շուտով նորէն ձեռք ձգեց դահը (477): Երկրորդ անգամ ծագեցաւ ապստամբութիւնը՝ նոյն գլուխներով, երբ Իղղոս՝ իբր սմենագօր իշխանութեամբ՝ Արեւելից սպարապետ էր, եւ դարձեալ Վերինայի սաղրելով՝ Տարսոնի մէջ կայսր օծուեցաւ Ղեւոնդիոս, Իղղոսի ձեռքը խաղալիկ մը, որ Անտիոք ալ մտաւ (484): Սակայն Չենոն յաղթանակեց նաեւ այս անգամ, եւ իւր Յովհ. Գոթացի զօրավարն Իղղոսը Պապիսոնի բերդի մէջ պաշարած՝ դերեց ի վերջոյ եւ ապստամբաց գլուխները կայսեր զրկեց (488): Արդ այս ապստամբութեան մասնակից էին — եւ այլազգ դժուար էր մտածել՝ քանի որ իրենց վերին հրամանատարն էր նոյն Իղղոսը — նաեւ հայ նախարարաց մէկ մասը (Հռոմք «սատրապ» կը գրեն միշտ): Ապստամբութեան զսպուելէն ետքը՝ Չենոն — թողլով Բալահովիտի նախարարը նախկին դրից մէջ — միւսները պաշտօնանկ ըրաւ եւ ընդ միշտ ջնջեց նախարարաց «տանուտէրութեան» ժառանգական պայագատութիւնը, որոշելով որ նախարարք ալ այնուհետեւ՝ միւս պաշտօնատարներու պէս՝ կայսերմէ պիտի անուանուին եւ տանուտէր մնան՝ ցորչափ կայսրն ուզէ (զործնականին՝ նոյն տոհմերէ դարձեալ): Միւս իրերը սակայն չփոխուեցան, ուստի եւ

անուանեալ «տանուտեարք» միւսներն վարչական եւ ղինուորական իշխանութիւնը պահեցին՝ դոնէ իբր կէս դար, մինչեւ որ իրաց բերմունքն արդէն աւելի հիմնական փոփոխութիւններ յառաջ բերաւ:

Հռոմէասայաստան ամբողջ Ե. դարը (— մինչդեռ նոյն դարուն աւերակ դարձած էր Պարսից Հայաստանը Վարդանանց ատեն ի մասնաւորի —) ընդհանրապէս հանգիստ անցուց: Շատ փնասուեցաւ սակայն թէ Հայոց երկիրը եւ թէ Պոնտոս 499ի մեծ երկրաշարժէն, որ աւերեց յատկապէս Արշամաշատէ մինչեւ Նէոկեսարիա ամբողջ երկիրը. իսկ Նիկոպոլիս բոլորովին կործանեցաւ: Յետոյ Յուստինիանոս շինեց ու նորոգեց թէ՛ ասոր թէ՛ առհասարակ բաղամթիւ տեղեաց սարիսպներն ու աւերածները, ի միջի այլոց նաեւ Սատաղինը, որ՝ թէեւ քաջաբար ղիմադրեց 530ի պատերազմին ատեն, եւ Պարսք մեծ սպարութիւն կրեցին սարսպաց առջեւ, բայց փնասուած էր, եւ Յուստինիանոս նոր շինեց՝ շատ աւելի բարձր ու թանձր: Բայց 607/8ին Պարսք դարձեալ առին թէ՛ Նիկոպոլիսն եւ թէ՛ Սատաղը՝ ինչպէս ուրիշ տեղեր, իսկ Արարացւոց արշաւանաց ատեն աւերակ եղաւ Սատաղ, եւ Նիկոպոլիս՝ աննշան: Յետոյ կարեւորութիւն ստացաւ այս հիւսիսակողմը՝ Սերասիոյ հետ յատկապէս Կողոնիա: Չ. դարէն ուրեմն Հռոմէասայաստան ալ սկսաւ կրկին թատր ըլլալ: Կաւատի (468—531) պատերազմաց ատեն նախ ընդդէմ Անաստասի (491—518) եւ ապա Յուստինիանու (527—565): Պատերազմին սպարուակն էր Հռոմայեցւոց հիւրընկալութիւնը եւ հովանաւորումն Պարսից բաժնին հայ նախարարաց: Ինչպէս Կարին առնուեցաւ (502ին), նոյնպէս Ամիդ գլխաւոր ամբոցը (503ին, ետ առնուեցաւ 504ին), եւ սաստիկ եղաւ վրէժը, ինչպէս որ աւեր եղաւ Միջագետք: Խաղաղութեան դաշինքը (506ին) չփոխեց սահմանադիւր, բայց Հռոմայեցիք օգտուեցան անով որ Մծրնայ ղիմաց կանգնեցին Դարան, որ

այնուհետև գլխավոր կէտ էր այն կողման : Իսկ 530ի պատերազմը, որ նոյնպէս մղուեցաւ մինչև Փոքր-Հայոց մէջ ալ, եւ որուն մէջ կաւատ ինքնին ալ արշաւանաց մասնակցեցաւ, իսկ Հռոմայեցւոց զօրավարն էր հռչակաւոր Բելիսար՝ որ շարաշար յաղթեց կաւատի՝ Կալլինիկեայ քով, ի վերջոյ՝ երբ կաւատի մահուանէ ետքը Սոսրով Ա. (501—578) «յաւիտենական խաղաղութիւնը» կնքեց (532/3ին) սահմանը շփոխուեցաւ, բայց բաւական ստորնացուցիչ էին ուրիշ պայմանները . յատկապէս Կասպեանց դրանց պահպանութեան համար մեծ գումար մը՝ դրեթէ հարկ մը՝ վճարել, Գարայէն հեռացընել դքսի հրամատարութիւնը եւն . միայն Ղազիկիայի («Լազիստան»՝ պէսպէս սահմաններով ըստ ժամանակաց)՝ որ Հայաստանի կործանմանէն ետքը նոր կառուարներն եղած էր, հռոմէական ազդեցութեան շրջանին մէջ մնալը՝ յաջողութիւն մըն էր (Դաշանցս մասին տես Գիւտերրոզի, «Բիւզանդիոն եւ Պարսկաստան», էջ 48 յջ.) :

Այս իրերն արդէն պիտի ստիպէին Հայաստանի հռոմէական սահմանաց մասէն յատուկ խնամք ունենալ : Յուստինիանոս՝ որ իւր ամբողջ կեանքը նուիրած եղաւ Արևելեան կայսրութեան վերանորոգման, եւ որ ի վերջոյ հիմնադիր կրնայ ըսուիլ Բիւզանդեան կայսրութեան, ինչպէս մեծ եղաւ իւր մեծամեծ շինութեամբք քաղաքաց, բերդերու եւն<sup>20</sup>, նոյնպէս մեծ՝ իրր վերակազմող վարչական ամէն ճիւղի մէջ : Իւր գործն է նաև Օրինաց վերակազմութիւնն ու բարեփոխումն, առանձինն յանձնաժողովով մը՝ որ երկար աշխատեցաւ եւ հրատարակեց նախ «Սահմանաց» ժողովածուն (529ին), յետոյ բուն Օրինագիրքը (Digestae, 533ին), եւ նորէն սրբադրուելէն ետքը հռչակուեցաւ վերջնական «Օրէնքը» (Codex Justinianus) : Ապագային հրատարակելի Օրինագիրները պիտի կոչուէին — եւ կոչուեցան — «Նորագիրք» (Novellae) : — Այս հանգամանաց մէջ անհնար էր որ Հռոմէահայոց նախկին — նախարարական — դիրքը մնար, եւ փոխուեցաւ ուրեմն հիմնապէս :

Նախ վերցուելով «Հայաստանի Կոմսի» պաշտօնը՝ թէ նոր Հռոմէահայաստանը եւ թէ՛ հին հռոմէական նահանգ Ա. եւ Բ. Հայք՝

միացուեցան մէկ զինուորական վարչութեան ներքեւ, որուն կարեւորութիւնը կը ցուցընէ արդէն տիտղոսը՝ առ Զիտտաս սպարապետ «Մագիստրիանոս զօրաց Հայաստանի եւ Պողեմոնական Պոնտոսի եւ Նախարարութեանց» («Ազգաց», Կ. Յուստ. Ա., 20, 5. ըսա Գիւտերրոզի, «Հռոմ. Հայաստ.», էջ 41—42, 56. Հիւրշման, անդ, 37—41 եւ այլուր՝ 528ին) : Այս հրամանագրին մէջ կայսրը կը սահմանէ թէ «Մեծ Հայք (Arm. magna = Բարձր-Հայք) որ Ներքազոյն կը կոչուի, եւ Նախարարութիւնք («Ազգք»՝ Gentes), այսինքն է՝ Անձիտ (Հանձիթ), Անգեղ-տուն, Հաշտեանք, Ծոփք (Շահեայ՝ «Սոփենէ»), Մեծ Ծոփք («Սոփանենէ»)՝ որուն մէջ է Նփրկերտ (Մարտիրոսաց-քաղաք) եւ Բալահովիտ. — եւ Ա. եւ Բ. Հայաստան (= Ա.—Բ. Հայք) եւ Պողեմոնական Պոնտոսը (= նաև Ա.—Բ. Հայքէ դուրս մնացածը)՝ իրենց դքսերով քու խնամոց կը յանձնենք, բոլորովին բառնալով Հայաստանի կոմսը, եւ հրամանիդ ներքեւ կը դնենք այլեւայլ Գումարներ (numeri դնդեր), ոչ միայն զօրոնք նոր կը հաստատենք, այլ նաև Առտնին եւ Արևելեան եւ ուրիշ բանակներէ ընտրուածները» եւն եւն : Հաստատուածն էր ուրեմն Հռոմէահայաստանի ընդհանուր Սպարապետութիւն մը՝ եւ կեդրոնատեղին՝ Թէոդուպոլիս, եւ ահոր ներքեւ էին Դուքս հրամատարներ, որոնց կայանքն էին՝ Բարձր-Հայոց շրջանին մէջ Սորձեան գաւառի Արտալէզ («Արտաղեսոն») քաղաքն ու ամուրը, երկուքին համար՝ Նախարարութեանց շրջանին մէջ՝ Մեծ Ծոփայ Նփրկերտ կամ Մարտիրոսաց-քաղաքը, եւ Հաշտենից Կթուիճը («Կիթարիզոն») : Բնական է որ հաստատուէր նաև քաղաքական վարչութիւն մը՝ կոմսին տեղ, եւ նահանգին գլուխ եղաւ Գահերէց մը (Praeses) իրր կուսակալ, գոնէ «Մեծ Հայոց» շրջանին համար : Վասն զի «Նախարարութեանց» շրջանին մէջ թէև արդէն ասով դադրեցաւ նախարարաց զինուորական վարչութիւնը, բայց մնացած կ'երեւայ կարճ ատեն մը իրր քաղաքական կառավարիչ, որովհետև ութ տարի ետքը (536ին) յատկապէս կը վերցուի այն ալ եւ այն սատրապութիւններէն կը կազմուի նահանգ մը՝ «Դ. Հայք» : Ասով լիակատար կը վերցուի նախարարութեանց ամէն պաշտօն ու իրաւունք, եւ Հռոմէահայաստան՝ բաժնուած երկու նոր նահանգի՝ իրապէս հռոմէական կ'ըլլայ նաև ըստ օրինաց, որուն համար կը

<sup>20</sup> Պրոկոպեայ յատուկ մէկ դէբքը՝ «Շինութիւնք» կը բաւէ միայն յիշել :

հրատարակուի յատուկ Օրինագիր մը (536ին, Օրին. ԴԱ) «Վասն Հայոց՝ զի յամենայնի պահեսցեն զօրէնս Հռովմայեցւոց»։ Անոր համար ուրիշ յատուկ Օրինագիր մ'ալ (ԱԱ, նոյն 536 տարին) կը հրատարակէ հայկական դաւառներու նոր կազմակերպութիւն մը, յատկապէս շեշտելով թէ նորակազմ «Գ. Հայք» յառաջ իրր նահանգ գոյութիւն չունէր, այլ «տոհմային վարչութեան» ներքեւ էր, թէ «սատրապութիւնը» հոմէական չէր, այլ «օտար կազմակերպութենէ մտած»։ Ուստի քաղաքացիական շրջանակի մը կը բարձրացուի եւն։ Նոր կազմուած չորս նահանգներու երկուքը բարձրաստիճան վարչութեամբ էին («գերամեծարութիւն»՝ անթիհիւպատի եւ կոմսի աստիճանաւ եւն)։ Բոլորովին նոր եղած են ուրեմն չորս նահանգները, եւ իրարու խառնելով յատկապէս Բարձր-Հայոց դաւառները՝ Փոքր-Հայոց աշխարհի եւ Պոնտոսի մէկ մասին հետ։ Այս նահանգներն են ուրեմն (հմմտ. Գելցէր, Բանակաթեմք, էջ 19 եւն. Հիւրշման, անդ, 38 եւն, եւ այլուր),

Ա. «Ներքին Հայք» (Ա. Հայք)։ Կը պարունակէր նախկին «Մեծ Հայք» կամ «Ներքսագոյն Հայք» իւր բոլոր դաւառներով, տակաւին նաեւ ուրեմն Խորձեան եւ Պաղնատուն։ Դարձեալ աւելցուած են ասոր վրայ՝ ա) Նախկին «Ա. Հայոց» մէկ մասը՝ հիւսիսային շրջանը, բուն հին Փոքր-Հայքը՝ շրջաններովս Սատաղ-Նիկոպոլիս-Կողոնիա. — եւ բ) Պողեմոնական Պոնտոսի ծովեզերեայ շրջանը՝ Տրապիզոն-Կերասոն։ Ուստի միով բանիւ միացուած են՝ Բարձր-Հայք, Փոքր-Հայք եւ Խաղտիք՝ ծովեզերեայ յիշեալ շրջանի մէջ։ Բնական է որ այս նահանգին կուսակալը «գերամեծար» անթիհիւպատոս մըն է։ Գլխաւոր քաղաքներ են՝ Թէոդուպոլիս (իրր զօրանիստ), եւ Բագանիս՝ որ Ղեւոնդուպոլիս կը կոչուէր, եւ որ բուն մայրաքաղաքն էր կուսակալութեանս, ուրեմն նոր անուն ու տեղ մը, որ բաւական շիոթութիւն պատճառած է։ Որովհետեւ Պրոկոպիոս (Շին. Գ, 5) նկարագրելով քաղաքն եւ իւր ճախճախուտ դաշտավայրը, եւ անունն ալ աւելի ուղիղ գրելով Բիզանա, կ'աւելցընէ թէ Յուստինիանոս տեղւոյն վատառողջութեան պատճառաւ հոն շինութիւն չըրաւ, այլ շատ մերձակայ (3 մղոն) Մուսինա տեղը շինեց քաղաքը՝ որ Յուստինիանուպոլիս կոչուեցաւ՝ զառիվայրի վրայ եւ ասորջ օդով։ Թէ ա՛յս եղաւ բուն կուսա-

կալանիստը՝ խնդիր չկայ, եւ թէ յետոյ Բիզանա-Ղեւոնդուպոլիսն ու Մուսինա-Յուստինիանուպոլիսը սկսան նոյնացուիլ՝ զիւրաւ հասկանալի է։ Բայց ո՞ւր էին այս տեղերը։ Ինճիճեան եղած է շիոթութեան պատճառը, պարզապէս Բագանիս-Բիզանա անուանց մէջ միշտ Բասեան (հին՝ Բասան եւն) տեսնելով, ուստի միշտ «այն է Բասեան» մեկնելով. որով բնական էր թէ Յուստինիանուպոլիսը պիտի ըլլար Բասենոյ-բերդը՝ արդի Հասանգալէ, Մուսինան ալ ի վերջոյ կրնար ըլլալ Բասենոյ Աւկոմին (Հին Հայաստ., էջ 381—382)։ Եւ ասի կրկնուած է նաեւ ուրիշներէ։ Ալիշան (Այրարատ, էջ 18) թէ նոյնպէս «այլայլեալ լծորդատառութիւն անուան» Բասենոյ՝ կը տեսնէ Բագանիս-Բիզանի, եւ դարձեալ թէ Հասանգալայի գլխաւորութիւնն ու մերձակայ մօրք յարմար ըլլան Պրոկոպեայ նկարագրութեան, բայց Մուսինա մը չէր գտներ հոն. այլ ասոր աւելի «յանկազոյն են անուամբ», կ'ըսէ, Ստորին Բասենոյ Չուին գիւղն ու աւերակ բերդը. սակայն նաեւ ասի «ընդ երկրայութեամբ թողեալ»։ Ասով երկու կարծիքս ալ (անուան) երկրայութեամբ յիշուած է՝ Էփրիկեան (Բնաշխարհիկ Բառարան, Բ., էջ 252 «Մուսինա»)։ Թէեւ իրեն համար ալ որոշ է թէ «Այրարատայ Բասեն դաւառի մէջ կը յիշուի» այս տեղը։ Ատենն է որ նմանաձայնութենէ մը հրապուրուելով՝ Բասենը չխառնենք խնդրոյ մէջ, ուր որեւէ գործ չունի։ Անհնար է որ Բիզանա-Ղեւոնդուպոլիս Բասենի մէջ ըլլար, անո՛վ որ Բասեն պարսկական էր, եւ սահմանն այնպէս ճիշդ գիտենք (Փարպ. 414 եւն. տեղեաց մասին հմմտ. նաեւ Սեբ. Գ., իդ. մնացեալքը՝ Բուզ. Գ, դ եւն՝ տես նոյն ինքն Ինճիճեան, «Հին Հայաստ.», 384—385). եւ որեւէ կերպով Ղեւոնդիոսի — ի հարկէ վերոյիշեալ հակակայսեր — անունը չէր կրնար տրուիլ պարսկական Բասենոյ-բերդի կամ այն կողման ալ տեղւոյ մը, աւելի եւս՝ շատ աւելի հիւսիս-արեւելեան Չուինի՝ արդի ուս-տճկ. սահմանի վրայ։ Ոչ ա՛լ Յուստինիանոս կրնար հոն քաղաք մը շինել, քանի որ սահմանադիժը չէր փոխուած, եւ նոյն Պրոկոպիոս (Պատմ. Պրս., Ժ. հմմտ. Շին., Գ, Ե եւն). զԹէոդուպոլիս գիտէ ճիշդ սահմանին վրայ՝ ինչպէս էր, եւ Սահմանադիժը փոխուեցաւ իրապէս միայն Մաւրիկի օրով (տես վարը)։ Արդէն եթէ չըլլար նմանաձայնութեամբ շիոթութիւնը՝ Բիզանայի տեղն ընդհանրապէս

որոշելը դժուար չէր Ինճիճեանի, որ ինքնին կը յիշէ թէ Եկեղեաց դաւառի եպիսկոպոսները՝ նաեւ տիեզերական ժողովոց մէջ՝ կը ստորագրեն իբրեւ Յուստինիանուպոլսոյ եպիսկոպոս: Եւ իրօք Կ. Պոլսոյ Բ. սիւնհոգոսին մէջ (553ին) կը ստորագրէ Գէորգ «եպ. Յուստինիանուպոլսոյ քաղաքին Մեծաց Հայոց». իսկ Կ. Պոլսոյ Գ. սիւնհոգոսի մէջ (680/1) «Գարանաղեաց կամ Կամախու» եպիսկոպոսին հետ կը ստորագրէ «Թէոդորոս եպ. Եկեղեաց կամ Յուստինիանուպոլսոյ մեծին Հայոց» եւ դարձեալ Թէոդորոս «եպ. Յուստինիանուպոլսոյ քաղաքի դաւառին Եկեղեաց» եւն (տես նաեւ Ինճիճեան, անդ, 11 եւն. Պամ. Տիեզ. Ժող., էջ 370, 435 եւն): Պէտք չկայ ի հարկէ ասկէ հետեւցընել թէ Յուստինիանուպոլիսը նոյն ըլլայ Եկեղեաց հին Երէզի կամ արդի Երզնկայի հետ (Երկուքս ճիշդ միեւնոյն տեղը չեն). թէ եւ ա՛յնպէս Կընդունի Ինճիճեան (անդ, 14. Բնաշխ. Բո., Ա., 624): Որովհետեւ, եթէ ի վերջոյ թերեւս անկարելի չըլլայ Բազանիսի համար, իրապէս պէտք է փնտռել Եկեղեաց եւ Պաղտեաց սահմաններու վրայ: Եկեղեաց-Պաղտիք եւ Տրապիզոն, իրարու յաճախ կապ ունեցած են նաեւ յետոյ եւ Պաղտեաց բանակաթեմին կը վերաբերէին: Վերջնոյս կամ թերեւս Տրապիզոնի իշխանութեան ստորակարգեալ եպիսկոպոսանիստերու մէջ՝ կը յիշուի կրկին Բիզանա՝ ի միջի այլոց՝ Բարբերի հետ (տես Գեղցէր, Սկզբն. Բիւզանդ. Բանակաթեմերու, էջ 57, որ կը հետեւցընէ թէ «Յուստինիանուպոլիս» անունը նորէն մոռցուած էր): Մեր խնդրոյ համար կը բաւէ այսչափը. եւ պէտք չունինք նկատողութեան առնուլ զիտնոց պոնտական Բիզանայի եւ կիլիկեան «Բուզանդայի» մասին յայտնած կարծիքները, եւ առհասարակ այս Յուստինիանուպոլսոյ տեղւոյ մանրամասն քննութեամբ զբաղիլ:

Բ. Երկրորդ Հայք, պարունակելով ա) նախկին «Ա. Հայոց» մնացած մասը՝ Սերաստիա-Սերաստուպոլիս շրջանքը. Բ) յաւելուած՝ Պողեմոնական Պոնտոսի մաս մը, որ նախնարար «Ա. Հայոց» մէջ մտած չէր, շրջանս Կոմանա (Պոնտական). եւ Գ) յաւելուած՝ Յունական Պոնտոսէ, շրջանքս՝ Չելա եւ Բերիսա (Բերսիսա): Կուսակալն էր Գահերիցու աստիճանաւ, մայրաքաղաքը՝ Սերաստիա:

Գ. Երրորդ Հայք կը պարունակէր նախկին «Բ. Հայք», ուստի նոյն շրջանքս՝ Մելիտենէ—Արկա—Արարիսոս—Արիարաթէ—Կոմանա (Գամրաց)—Կոկիսոն: Մայրաքաղաք՝ Մելիտինէ. կուսակալը՝ Կոմս մը «գերամեծար» աստիճանաւ (ուստի բարձրացած, մինչ յառաջ Գահերէց մըն էր):

Դ. Չորրորդ Հայք, նոր կազմակերպուած նախկին Ծովական նախարարութենէ (Ծովի Ծահեայ, Անգեղ-տուն, Մեծ Ծովիք, Հաշտեանք, Անձիտ, Բալահոլիտ): Կուսակալը՝ Գահերէց մը՝ հիւպատոսի աստիճանով: Մայրաքաղաքը՝ Նփրկերտ, քաղաքական իրաւամբք օժտուած, բանակատեղին՝ Կթոնի ամրոցը:

Հոռոմէական Հայաստան այսպիսով կորսնցուց իւր ներքին ինքնօրէն վարչութեան յետին մնացորդը, եւ կարծես կարգն եկած էր Պարսկահայաստանի մէկ մասին ալ նոյն շաղկապով ընթանալու, եւ իրապէս պատահեցաւ նոյն դարուն վերջերը: Հազիւ այս կարգադրութիւնն եղած էր՝ կրկին պատերազմ կալ Սոսրովու կողմանէ (540ին). եւ Պարսից ընդհանուր յաջողութիւնն աւելի էր: Ոչ միայն Միջագետքի քաղաքները մի առ մի առնուեցան կամ հարկ տուին, առնուեցաւ նոյն իսկ Սնտիոք եւ բնակիչք փոխադրուեցան Սոսրովի հիմնած Սոսրով-Անտիոքիա: Յետոյ փոփոխ եղաւ բախտը, եւ զինադադարէ մ'ետքը (545)՝ Լազիկա էր կռուոյ ասպարէզը, եւ Պարսից նպատակն էր՝ իբր տէր Վրաստանի՝ մուտք ունենալ նաեւ ծովու վրայ, եւ Հոռոմայեցւոց հիմնած Պետրա նաւահանգիստը, որ առիթ տուած էր Լազերոս տփգոհութեան եւ անոր համար ասոնց Գորուզ արքայն Պարսից կողմն էր, առնուեցաւ (բայց Հոռոմայեցիք ետ առին 551ին): Ի վերջոյ կնքուած խաղաղութիւնը բոլորովին աննպաստ չէր (562ին): Լազիկա մնաց Հոռոմայեցւոց, որոնք սակայն տարուէ տարի մեծ դումար կը վճարէին Պարսից: Հայաստանի սահմանագիծը չփոխուեցաւ <sup>21</sup>:

(Շարունակելի:)

<sup>21</sup> Մանրամասնութիւնք տես Գիւտերբոյ, «Բիւզանդիոն» եւն, էջ 60—141: